ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Կոտայքի մարզի <<Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (12 դասաժամ), աշխարհագրություն (1,5 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համապատասխան որակավորման վերաբերյալ
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն /Ձև 4/
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ

   Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

   Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
   Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
   Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի դեկտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան № 11 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 14-րդ փողոց, շենք 14:
   Տեղեկությունների համար զանգահարել՝ /0223/ 2-28-51 կամ /094/ 400-332 հեռախոսահամարներով: